

ՍՐԲՈՅՆ ԹԷՈՂՈՐՈՍԻ ԶՕՐԱՎԱՐԻՆ

ԱՍՍՏԵՆԱԼ ԱՌԱՔԵԼԻ

Այսօր ցընծայ սուրբ եկեղեցի,
 Ընդրեալ գըշխոյ հարսըն պանծալի,
 Ժողովեալ զմանկունս քո առաքաստի.
 Յօրհնեցու թիւն փրկչին Յիսուսի,
 Յաւուր տօնի սրբոցն վկայի
 Թէոդորոս մեծ նահատակի. Շանի
 Որ ի մանկութեան սրբութեամբ սը-
 եւ առաքինութեամբ քաղաքալարի.
 Քաջ զօրական ի պատերազմի
 Եւ մենամարտիկ ի յասպարիսի,
 Կոխել զգլուխըն բելիարի.
 Եւ զերկելի կամակոր օձի.
 Զարչարանօք փրկչին հետեւի
 Եւ ի յերկինս փառօք պըսակի
 Բարեխօսութեամբ մեծ ի նահատակին
 Կեցոյ զմեզ մարդասէր Գր. աղաչեմք:
 Իսկ լուսաճեմ ի յերկինս ուղղեալ,
 Հիմըն ի վերայ վիմին հաստատեալ
 Թէոդորոս վրկայն պանծացեալ,
 Իմաստութեամբըն պայծառացեալ
 Ի սէրն անմահ Արարչին վառեալ,
 Եւ զանցաւոր կեանքս արհամարհեալ
 Զսնոսի բազինսըն հըրով լուցեալ,
 Զունայնութիւն կոռցըն ցուցեալ,
 Գառն անարատ Տեառնըն ընծայեալ
 Եւ ողջակէզ զանձըն մատուցեալ,
 Քաջ բարունակ ի յերկրի սրբեալ,
 Ուր պաղաւէտ յորթըն հաստատեալ
 Թէոդորոս Տեառնըն մշակեալ
 Բազում վկայս արգիւնաւորեալ. Բար,
 Անմահ ողկոյզ կենարար Բանին
 Որ ճմլեցաւ ի հընձան խաչին,
 Եւ պատրաստեաց զանապակ գինին
 Ի սեղանի սուրբ խառնարանին.
 Կոչեաց զվկայսն յարբումն իմաստին
 Յուրախութիւն կենաց բարձակին
 Որով զմայլեալք ի յուրախութիւն

Եւ բերկրեցան միշտ ի սուրբ Հոգին,
 Արփիահրաշ լուսով փայլեցին
 Զխաւար մեղացըն փարատեցին,
 Ըղբանսարկուն փրաւորեցին
 Եւ զօրըս նորին իսպառ վանեցին,
 Մեզ ճանապարհս ի յերկինս բացին
 Արքայութեան հաղորդս արարին. Բր,
 Քաղցրարար բառ մաքուր աղանի
 Աւետաւոր բանաւոր հօտին
 Թէոդորոս վկայն պանծալին՝
 Ազգումն արար ի յեկեղեցին,
 Եւ ըզխորհուրդըն Յուլիանոսին,
 Յայտնեալ եցոյց սուրբ հօտապետին
 Յաւուր պահոց մեծ քառանկեկին
 Ըզգուշանալ ի հնարից չարին
 Մի՛ ճաշակէք ի վաճառոցին
 Զխառնեալ արեամբ և ճարպով զոհին.
 Այլ կերակրիք ի ձեր սեղանին
 Եւ քուլիպաս տացէք աղքատին,
 Որով լուեալ ըզգաստանային
 Եւ զտօն սրբոցըն փառօք պատուէին,
 Երանելին վկայ փառաւոր
 Թէոդորոս անուամբ ահաւոր,
 Արիական և քաջ զինաւոր
 Անմահ արքային եղեր սպասաւոր,
 Ընտրեալ յերկրէ մեր պըսակաւոր
 Արքայութեանըն աւետաւոր,
 Բարի երկիր և արդիւնաւոր
 Պտղաբերեալ ըզհարիւրաւոր,
 Սուրբ առաքաստին ժառանգ հոգեւոր
 Մեզ բարեխօս առ Տէրն ահաւոր.
 Այսօր բամալքըս հանդիսաւոր
 Պատուեմք զտօնըս քո փառաւոր. Բր,
 Լիցուք մարմնով մեզ չարչարակից
 Նախնին մերոյ սրբոց վկայից,
 Առաքելոցըն քրտնաշանից
 Տեսանողաց սուրբ մարգարէից,

Հայրապետաց դասուց գումարից
Մարտիրոսաց ըն բազմերամից,
Ճգնաւորաց խարաղնազգեցից
Եւ կուսանացն մաքրաղարգից,
Ընդ անմարմնոց գոլով պարակից
Եւ ըստ կարի մերում տօնակից՝
Զի և փառաց նոցա դասակից
Հաղորդ լիցուք և պըսականից . Բր .
ի հոգանիւթ զարմէս ընդրեցար
Կոյս անարատ և Աստուծոյ մայր ,
Փոխանակ տրտմութեան մեզ ուրա .


[խարար

Առիթ փրկութեան և կենաց պատճառ .
Աբրահամեան ուխտին տաղաւար .
Մեկէզ միւրեմի և մարութ տաճար .
Կենաց կըտակ և անճառ տումար .
Տախտակ քարեղէն և հոգւոյ քընար ,
Գեղմն իմանալի ցօղովն լցար .
Լեռն վիմաժին կանխաւ յայտնեցար
Առաւօտ լուսոյ և զուարթարար
Եւ գերարփին ի յերկրի ցուցար ,
Ծառըդ կենաց այսօր ծաղկեցար
ԶԲանն ի մարմնի միացեալ ծնար :
Առ քեզ գոչեմք ձայն աղերսաբար
Լեր բարեխօս առ Տէրն անգաղար ,

Պահել զմեզ անդորրաբար ,
Հաղորդ լինել փառաց անբապառ ,
Ահա յիշ . — Եւ եւս . — Զանձինս .
Էին անեղին հայրածին Բանին [ծին ,
Յաճար մարմնային սուրբ Աստուածա .
Տաճարխօսեալ քո սուրբ Միածնին
Զի փրկեսցէ զմեզ յահագին
Աղաչանք Յովաննու ձայնին
Ի ծնունդս կանանց մեծ կարապետին ,
Խախաշաւիզ մեծ ճանապարհին
Պաղատանք վեհին հանդիսին [բին ,
Որք ի վերնատունդ Մուրբ Հոգին ար .
Մաղթանք մեր սուրբ Լուսաւորչին
Պարգեւատուն մեծ հօտապետին .

Աղերս հայցուածոց ընդ քեզ քաղց-
[րասցին

Զայն համագումար ընտրելոյ դասին .
Զի զթացի Տէրն ողորմագին
Եւ թողցէ զյանցանս մերոյ պարտին .
Դարձուցէ զպատիժն պատուհասին
Եւ փրկեսցէ , յարկածից չարին ,
Եւ նորոգեսցէ յաւուրն վերջին
Հաղորդս արասցէ տանն հայրենի :
Եւ այժմ ողոր :



ՏԱՂ Ս . Թ Է Ո Դ Ո Ր Ո Ս Ի

Խաղաղարար նոր թագաւոր
Քո զինւորացն հոգևոր ,
Խաղաղութեան եկեղեցւոյ
ԶԹէոդորոս եղիբ զինուոր :
Որ զօրացեալ քե հոգեպէս ,
Անփակ արագ հրեշտակապէս
Քաջ քո վրկայն Թէոդորոս .
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս ,
Ըզխոովարարն եկեղեցոյ՝
Ըզգայապէս եհար ազդոյ
Քաջ քո վրկայն Թէոդորոս .
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս ,
Նրման խաչի քո չարչարեալ
Եղև փառաց քոց հաղորդեալ ,

Մահուամբ ըզմահ քո վրկայեալ
Զքոյդ յարութիւն կենեքն յայտնեալ :
Պարտեաց մահուամբն ըզբեղիար
Եւ յետ մահու զպաշտօնեայն չար ,
Քաջ քո վրկայն Թէոդորոս .
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս ,
Բամից զօրաց քոց հրանիւթից
Յուցաւ բարեաց գոլ գործակից
Քաջ քո վրկայն Թէոդորոս
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս ,
Յաճոյց Սըրբոյ Հոգոյդ հոգմով՝
Զմեծ չորհրդեղն և զմեղաց ծով ,
Քաջ քո վրկայն Թէոդորոս .
Հայցմամբ սորա լուր մեզ Քրիստոս :